

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Գագիկ Մելիքյանի, Սուքիաս Ավետիսյանի, Լյովա Խաչատրյանի և Տաճատ Վարդապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ ստաժի հաշվարկման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 778 որոշմամբ սահմանվել են զինձառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետի (ստաժի) օրացուցային և զինվորական ծառայության ժամկետի (ստաժի) արտոնյալ հաշվարկի, ինչպես

նան այլ բնույթի գործունեության տեսակների ցանկը, հաշվառման կարգն ու պայմանները: Նույն որոշմամբ սահմանվել է նաև, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող զինվորական ստաժում ծառայության ժամանակաշրջանները հաշվառվում են օրացուցային հաշվարկով:

Երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու ստաժը հաշվարկելիս՝ զինվորական ծառայության ընդհատումները որևէ դեր չունեն: Նշանակություն չունի, թե ծառայությունն ընդհատվել է հիվանդության կամ այլ պատճառով, քանի որ կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող ստաժը հաշվարկվում է ըստ ծառայած ժամանակահատվածների:

Բացի դրանից, զինվորական ծառայությանն առնչվող հարաբերությունները սահմանվում են համապատասխան մարմիններում ծառայությունը կարգավորող օրենքներով, որոնք ծառայությունը հիվանդության կամ այլ պատճառով ընդհատվելու դեպքում ծառայության ժամկետները չհաշվարկելու որևէ դրույթ չեն պարունակում:

Ելնելով շարադրվածից և հաշվի առնելով օրենքի նախագծով առաջարկվող կարգավորման անհրաժեշտության բացակայությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն անպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արտեմ Ասատրյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին եւ  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքի 10-րդ հոդվածի 1-ին պարբերությունում «անցածե բառից հետո լրացնել», ինչպես նաեւ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած եւ գորացրված, այնուհետեւ հաշմանդամությունը կորցնելու պատճառով զինվորական ծառայությունը շարունակածե բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

### Հիմնավորում

**«Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին եւ  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի  
ընդունման անհրաժեշտության**

Նախագծով հստակեցվում է զինվորական ծառայության ընթացքում հիվանդության պատճառով գորացրվելու եւ որոշ ժամանակ անց զինձառայությունը շարունակելու դեպքում զինձառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու հարցը՝ տարբեր մեկնաբանություններից խուսափելու նպատակով: